ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ

1. Ֆինանսների տնօրինման քաղաքականություն

Քոլեջի ֆինանսների տնօրինումն իրականացվում է փուլերով՝

1.Պլանավորման փուլ

Այն ներառում է քոլեջի եկամուտների և ծախսման ուղղությունների պլանավորումը՝ քոլեջի զարգացումը ապահովելու նպատակով:

2. Ռեսուրսների ապահովումը՝ քայլերի հաջորդականությամբ՝

- Նախնական բյուջեի կազմում ,
- ռեսուրսների օգտագործման ուղղությունների որոշում,
- բյուջեի հաստատում և իրականացում:

Քոլեջի բյուջեն կազմվում է տարեկան կտրվածքով, պլանավորվում և ներկայացվում է Կառավարման խորհրդին՝ քննարկման և հաստատման:

Փաթեթը կազմվում է տնօրենի և հաշվապահի կողմից և բաշխվում ըստ ուղղությունների:

1. Ռեսուրսների բաշխում և կառավարում, որի կազմման հիմքում գերակա ուղղություններն են՝

- Աշխատավարձ,
- ծառայությունների և ապրանքների ձեռք բերում,
- պետական բյուջեի վճարումներ,
- կապիտալ ծախսեր

Ռեսուրսների բաշխումը իրականացվում է տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրենի և պահեստապետի կողմից՝ համապատասխան ստորաբաժանումների պահանջագրերի հիման վրա, իսկ ֆինանսական ռեսուրսների բաշխումը տնօրենի և հաշվապահի կողմից՝ հաստատված նախահաշվի հիման վրա:

2. Ֆինանսական հաշվետվությունները պետք է ապահովեն հետևյալ հիմնական դրույթները՝

- Բյուջեի փաստացի ֆինանսական ցուցանիշների նախատեսում,
- եկամուտների և ծախսերի աղբյուրները,
- մնացորդի կանխատեսում,
- պատասխանատվություն:

Ֆինանսների համար պատասխանատվություն են կրում Քոլեջի տնօրենը, հաշվապահը և հաշվետարը և այն կառուցվածքային ստորաբաժանումները, անձինք, որոնք պատասխանատու են տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման համար:

2.Ֆինանսների տնօրինման ընթացակարգ

2.1 Սույն ընթացակարգի գործունեության ոլորտը տարածվում է Քոլեջի հաշվապահական հաշվառման կառուցվածքային ստորաբաժանման վրա և որոշում է Քոլեջի ֆինանսական ապահովման գործընթացները:

2.2 Ընթացակարգի նպատակը Քոլեջի ֆինանսական ապահովման կայուն համակարգի ստեղծումն է:

2.3 Քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը միտված է ֆինանսական ռեսուրսների հավաքագրմանը և օգտագործմանը՝ ի նպաստ Քոլեջի խնդիրների և իրականացվող գործառույթների:

3.Ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և ընթացակարգի սկզբունքները

3.1 Ֆինանսների քաղաքականությունը որոշում է Քոլեջի ֆինանսների կառավարման սկզբունքները՝

1. Համապատասխանություն,
2. ամբողջականություն,
3. հստակություն,
4. հավասարություն,
5. պարզություն:

Քոլեջի ֆինասնավորման աղբյուրները՝

1.Պետական ֆինանսավորում,

2. ուսանողների վարձավճարներ,

3.կրթական վճարովի ծառայություններ,

4.դրամաշնորհային ծրագրեր,

5.տարածքի վարձակալական վճարներ,

6.արխիվային ծառայություններից ստացված վճարներ: